ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն
TRANSPARENCY INTERNATIONAL
anti-corruption center




# տարեկան հաշվետվություն
# annual report
# 2008

Սույն հրապարակումն իրականացվել է Բաց հասարակության ինստիտուտի Մարդու իրավունքների և կառավարման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում

This publication was supported by a grant provided by the Human Rights and Governance Grant Program of Open Society Institute

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Հայաստան, Երևան 0025, Այգեստան, 9րդ փողոց, տուն 6
Հեռ.՝ +374-10-569910, 553069
Ֆաքս՝ +374-10-571399
Էլ. փոստ՝ info@transparency.am
www.transparency.am

Շապիկի լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի
Դիզայնը և տպագրությունը՝ Մատիտ Ստուդիայի / www.matit.am
Տպաքանակը՝ 50 օրինակ
Երևան 2009

Transparency International Anti-corruption Center
6, Aygestan 9th Street, Yerevan 0025, Armenia
Phones:  (37410) 569910, 553069
Fax: (37410) 571399
Email: info@transparency.am
www.transparency.am

Cover photo by Gagik Shamshyan
Design and publication by Matit Studio / www.matit.am
Printed copies – 50
Yerevan 2009

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
# TABLE OF CONTENTS


| | | | |
|---|---|---|---|
| 2 | Կազմակերպության մասին | 3 | About the Organization |
| 4 | Խորհրդի անդամներ | 4 | Board Members |
| 5 | Աշխատակազմ | 5 | Staff |
| 6 | Գործընկերներ / Ցանցեր | 7 | Partners / Networks |
| 8 | Ծրագրեր / Նախաձեռնություններ | 9 | Projects / Initiatives |
| 32 | Կոնֆերանսներ / Սեմինարներ | 33 | Conferences / Workshops |
| 38 | Ֆինանսական տվյալներ / Դոնորներ | 39 | Finances / Donors |

# ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
# ABOUT THE ORGANIZATION



«Տարածաշրջանային զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2000թ. հուլիսին: 2001թ. հոկտեմբերից այն հավատարմագրվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» (ԹԻ) համաշխարհային հակակոռուպցիոն շարժման կողմից՝ ներկայացնելու այդ շարժումը Հայաստանում: 2008թ. փետրվարին կազմակերպությունը վերագրանցվել և վերանվանվել է որպես «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»:

**Առաքելությունը՝** նպաստել արդյունավետ հանրային քաղաքականությանը և կառավարմանը՝ կանխարգելելու կոռուպցիան և ամրապնդելու ժողովրդավարությունը Հայաստանում ու տարածաշրջանում:

**Նպատակները՝** խթանել թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու հանրային մասնակցությունը և աջակցել քաղաքական, տնտեսական ու սոցիալական բարեփոխումների համար բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը:

**Գործունեությունը՝** անցկացնել Հայաստանում և տարածաշրջանում ընթացող քաղաքական, տնտեսական ու սոցիալական բարեփոխումների գործընթացների ընդգրկուն ուսումնասիրություն, իրականացնել հանրային քաղաքականության բարեփոխումների մոնիտորինգ և գնահատում, ինչպես նաև հանրային քաղաքականության արդյունավետությանն ուղղված շահերի պաշտպանություն ու լոբբինգ, կազմակերպել հանրային քաղաքականության և կառավարման գործընթացների վերաբերյալ հանրային իրազեկման քարոզարշավներ և զարգացնել հանրային քաղաքականության ու կառավարման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության համար անհրաժեշտ կարողություններ:





The organization was established in July 2000 as a local NGO - the Center for Regional Development. As of October 2001, it was granted the status of accredited National Chapter of Transparency International (TI), the global anti-corruption movement. In February 2008, it was reregistered and renamed as Transparency International Anti-corruption Center.

**Mission:** to promote effective public policy and good governance in order to prevent corruption and strengthen democracy in Armenia and the region.

**Goals:** to foster transparency, accountability and participation, and promote an enabling environment for political, economic and social reforms.

**Activities:** to conduct comprehensive research on the process of political, economic and social reforms in Armenia and the region, carry out monitoring and evaluation of policy reforms, advocate and lobby for policy changes to ensure the effectiveness of reforms, launch public awareness campaigns on the public policy and governance processes, and build civil society's capacity to participate in policy-making and governance matters.

# ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ
# BOARD MEMBERS



Ամալյա Կոստանյան
*նախագահ*
*Հակակոռուպցիոն հարցերով*
*խորհրդատու, ԹԻՀԿ*

Amalia Kostanyan
*Chairwoman*
*Anti-corruption Consultant, TIAC*

Վարուժան Հոկտանյան
*փոխնախագահ*
*Հանրային քաղաքականության*
*հարցերով փորձագետ, ԹԻՀԿ*

Varuzhan Hoktanyan
*Vice-Chair*
*Public Policy Expert, TIAC*

Լիլիթ Հակոբյան
*Միջազգային հարաբերությունների*
*հարցերով փորձագետ, Եվրոպական*
*իրավունքի և ինտեգրման կենտրոն*

Lilit Hakobyan
*Researcher on International Affairs Issues,*
*Center for European Law and Integration*

Վազգեն Կարապետյան
*Տարածաշրջանային ծրագրերի*
*ավագ պատասխանատու, Եվրասիա*
*համագործակցություն հիմնադրամ*

Vazgen Karapetyan
*Senior Program Officer for Cross-Border*
*Programs, Eurasia Partnership Foundation*

Արթուր Լալայան
*Իրացման և մարկետինգի տնօրեն,*
*«Սոլարէն» ՍՊԸ*

Artur Lalayan
*Marketing and Sales Manager, SolarEn LLC*

# ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
# STAFF






Սոնա Այվազյան
*Գործադիր տնօրեն*

Sona Ayvazyan
*Executive Director*

Ամալյա Կոստանյան
*Հակակոռուպցիոն հարցերով խորհրդատու*

Amalia Kostanyan
*Anti-corruption Consultant*

Վարուժան Հոկտանյան
*Հանրային քաղաքականության հարցերով փորձագետ*

Varuzhan Hoktanyan
*Public Policy Expert*

Շահեն Շահինյան
*Գլխավոր հաշվապահ*

Shahen Shahinyan
*Chief Accountant*

Վախթանգ Սիրադեղյան
*Լրատվամիջոցների հարցերով պատասխանատու*

Vakhtang Siradeghyan
*Media Specialist*

Նունե Այդինյան
*Տեղեկատվության հարցերով պատասխանատու*

Nune Aydinyan
*Information Specialist*

Իրինա Կարապետյան
*Ծրագրի օգնական*

Irina Karapetyan
*Project Assistant*

Քնարիկ Բոյաջյան
*Վարչական հարցերով օգնական*

Knarik Boyajyan
*Administrative Assistant*

Քրիստինե Մարգարյան
*Գործերի կառավարիչ*

Christina Margaryan
*Office Manager*

Լիլիթ Բավեյան
*Ծրագրի օգնական*

Lilit Baveyan
*Project Assistant*

# ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ / ՑԱՆՑԵՐ
# PARTNERS / NETWORKS



«Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնություն

Երևանի մամուլի ակումբ ՀԿ

«Էկոդար» բնապահպանական ՀԿ

Էկոլոգիական հասարակական դաշինք

Թեղուտի պաշտպանության խումբ

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե ՀԿ

Հայաստանի հելսինկյան կոմիտե ՀԿ

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Պետական կարիքների զոհեր ՀԿ

Քաղաքացիական հասարակության՝ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի սատարողների դաշինք





"Partnership for Open Society" Initiative

Yerevan Press Club NGO

"Ecodar" Environmental NGO

Environmental Public Alliance

Teghut Defense Group

"Asparez" Journalists' Club NGO

Committee to Protect Freedom of Expression NGO

Helsinki Committee of Armenia NGO

Helsinki Citizens' Assembly Vanadzor Office NGO

Victims of State Needs NGO

Coalition of Civil Society Friends of the UNCAC

# ԾՐԱԳՐԵՐ / ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
# PROJECTS / INITIATIVES



## Նախագահական ընտրությունների քարոզարշավի ֆինանսավորման և հանրային գնումների մոնիտորինգ Հայաստանում 2008թ.

**Իրականացման ժամկետ՝** 24.12.2007 - 31.03.2009

**Բյուջե՝** 17,035,800.00 ՀՀ դրամ

**Դոնոր կազմակերպություն՝** Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ

**Նկարագրություն՝** Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի, արդյունավետ կառավարմանը՝ քաղաքական, տնտեսական ու սոցիալական զարգացման գործընթացների ուղղությամբ՝ խթանելով թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու մասնակցությունը մոնիտորինգի ու վերլուծության ընթացակարգերի ու գործընթացների կիրառմամբ, բարձրացնելով իրազեկությունը, ծավալելով հանրային քննարկումներ, նախաձեռնելով շահերի պաշտպանություն և լոբբինգ՝ միտված բարեփոխումներին: Ծրագիրը բաղկացած է 2 մասից՝ 2008թ. նախագահական ընտրությունների քարոզչության ֆինանսավորման և հանրային գնումների մոնիտորինգ՝ դրանց արդյունքների հրապարակման և տարածման միջոցով:

**Արդյունքներ՝**

- ՀՀ նախագահի թեկնածուների նախընտրական քարոզչության ֆինանսավորման մոնիտորինգի վերաբերյալ զեկույց
- Մամուլի ասուլիս՝ հրապարակելու 2008թ. ընտրությունների ընթացքում նախընտրական քարոզչության ֆինանսավորման ու վարչական ռեսուրսների չարաշահման վերաբերյալ մոնիտորինգի արդյունքները





# Monitoring of Presidential Election Campaign Finance and Public Procurement in Armenia in 2008

**Implementation period:** 24.12.2007 - 31.03.2009

**Budget:** AMD 17,035,800.00

**Donor:** Open Society Institute Assistance Foundation

**Description:** The project aims to promote good governance in Armenia in its political, economic and social development processes by fostering transparency, accountability and participation through monitoring and analyzing procedures and processes, raising awareness, generating public debate, initiating advocacy and lobbying for reforms. The project consists of two parts, the first being monitoring of election campaign finance in the 2008 presidential elections and the second being monitoring of public procurement via the presentation and dissemination of the findings.

**Outputs:**

- Report on the results of monitoring presidential candidates' campaign finances
- Press conference to present findings of campaign finance monitoring and to detail abuses of administrative resources during the 2008 presidential elections
- Report on observation of local elections in Yerevan's Arabkir and Kentron communities
- Participation in dozens of TV and radio programs, interviews given to print and electronic media, roundtable discussions, workshops and seminars

- Երևանի Արաբկիր և Կենտրոն համայնքներում համայնքի ղեկավարների և ավագանու անդամների ընտրությունների դիտորդության իրականացման վերաբերյալ զեկույց

- Մասնակցություն տասնյակ հեռուստառադիոհաղորդումների, տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներին տրված հարցազրույցներ, խորհրդակցություններ, աշխատանքային հանդիպումներ և սեմինարներ

- ԹԻՀԿ-ի վեբ էջեր՝ նվիրված 2008թ. ՀՀ նախագահի և 2008թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին

- Հայաստանում գնումների համակարգի մոնիտորինգի վերաբերյալ զեկույցի նախագիծ

- Գնումների համակարգի բարեփոխումների ազգային ռազմավարության նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ:

- Web pages on TIAC website dedicated to the 2008 presidential elections and 2008 local self-government elections in Armenia
- Draft report on the results of monitoring the government procurement system in Armenia
- Remarks and suggestions on the draft National Strategy for Armenian Public Procurement Reforms.

## Նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման մոնիտորինգ Հայաստանում

**Իրականացման ժամկետ՝** 15.08.2008 - 21.02.2009

**Բյուջե՝** 6,429,697.50 ՀՀ դրամ

**Դոնոր կազմակերպություն՝** ԱՄՆ ՄԶԳ ծրագիր՝ իրականացվող Այ Էֆ Ի Էս (Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամ) կազմակերպության կողմից

**Նկարագրություն՝** Ծրագիրը նախատեսում է բարձրացնել քաղաքական ֆինանսավորման վերաբերյալ հանրային իրազեկությունը, ինչպես նաև նախընտրական քարոզչության թափանցիկությունն ու արդարությունը Հայաստանում՝ հայ փորձագետների հետ ընտրական օրենսդրության վերաբերյալ քննարկումների միջոցով ՀՀ ընտրական օրենսգրքի համապատասխան դրույթների բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացմամբ: 2009թ. ծրագրված է հրապարակել նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման մոնիտորինգի՝ ՀԿ-ների համար ուսուցողական ձեռնարկի հայերեն տարբերակն ու 2007թ. ՀՀ Ազգային ժողովի և 2008թ. ՀՀ նախագահի ընտրությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման մոնիտորինգի վերաբերյալ համապարփակ զեկույցը:

**Արդյունքներ՝**

- ՀՀ Ազգային Ժողովի 2007թ. և ՀՀ նախագահի 2008թ. ընտրությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման և վարչական ռեսուրսների չարաշահման վերաբերյալ մոնիտորինգի արդյունքների ներկայացում Աթենքում կայացած 13-րդ միջազգային հակակոռուպցիոն կոնֆերանսում (հոկտեմբերի 30-նոյեմբերի 2, 2008թ.)

- Փորձագիտական խորհրդակցություն նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման և ընտրությունների հետ կապված այլ հարցերի շուրջ՝ կուսակցությունների, ՀԿ-ների ներկայացուցիչների և ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների մասնակցությամբ:





# Campaign Finance Monitoring in Armenia

**Implementation period:** 15.08.2008 - 21.02.2009

**Budget:** AMD 6,429,697.50

**Donors:** USAID, implemented by International Foundation for Electoral Systems (IFES)

**Description:** The project intends to increase public awareness about political finance and to enhance the transparency and fairness of electoral campaigns in Armenia through discussions of electoral legislation with Armenian experts to develop recommendations on the improvement of the relevant provisions of the Armenian Electoral Code. Slated for publication in 2009 are Armenian version of a handbook on monitoring election campaign finance and use of administrative resources for the Armenian NGOs, and a comprehensive report on campaign finance monitoring conducted during 2007 Armenian parliamentary and 2008 presidential elections.

**Outputs:**

- Presentation on the results of monitoring of campaign finance and abuse of administrative resources during 2007 parliamentary and 2008 presidential elections in Armenia at the $13^{th}$ International Anti-corruption Conference in Athens (October 30 – November 2, 2008)

- Round-table expert discussion on campaign finance and other election-related issues attended by representatives of political parties, NGOs and members of the National Assembly.

## «Իմ հարցը ապագա նախագահին»

**Իրականացման ժամկետ՝** 01.11.2007 - 31.03.2008

**Բյուջե՝** 9,366,042 ՀՀ դրամ

**Դոնոր կազմակերպություն՝** Բրիտանական դեսպանություն Երևանում

**Նկարագրություն՝** Ծրագրի նպատակն է, օգտվելով 2008թ. ՀՀ նախագահի ընտրության հնարավորությունից, խթանել երիտասարդ սերնդի քաղաքական միտքը, ժողովրդավարական արժեքներն ու մասնակցությունը Հայաստանում՝ առաջին անգամ կազմակերպելով հեռուստահաղորդումներ նախագահի թեկնածուների և Երևանի, Գյումրիի, Վանաձորի ու Գորիսի դպրոցների ավարտական դասարանների աշակերտների միջև, որոնք ընտրվել են երկփուլ մրցույթի արդյունքում:

**Արդյունքները՝**

- 6 հեռուստահաղորդումների նկարահանում և հեռարձակում 2008թ. փետրվարի 9-ից 17-ը հեռուստադիտման լավագույն ժամանակ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության եթերով և Գյումրիի ու Գորիսի տեղական հեռուստատեսություններով:





## “My Question to Future President”

**Implementation period:** 01.11.2007 - 31.03.2008

**Budget:** AMD 9,366,042

**Donor:** British Embassy Yerevan

**Description:** The purpose of the project is to use the 2008 Presidential Elections to promote political thinking, democratic values and encourage greater participation among young people in Armenia by organizing the first ever TV shows with presidential candidates and high school students from Yerevan, Gyumri, Vanadzor and Goris through a two-round competition.

**Outputs:**

- 6 TV shows shot and broadcast in prime time between February 9 and 17, 2008 by “Yerkir Media” television and local television of Gyumri and Goris.

# Արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության խթանումը Հայաստանում

**Իրականացման ժամկետ՝** 01.09.2007 - 31.08.2009

**Բյուջե՝** 29,999,900 ՀՀ դրամ

**Դոնոր կազմակերպություն՝** ԱՄՆ ՄԶԳ Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագիր, Քաունթերփարթ Ինթերնեշնլ - Հայաստան

**Նկարագրություն՝** Ծրագրի նպատակն է ապահովել ՀՀ նոր Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի ընդունումն ու առավել արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացումը: Բազմաթիվ մեթոդներ են կիրառվում այն իրականացնելու համար, մասնավորապես՝ շահերի պաշտպանությունը՝ հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի որակի բարելավման, հաղորդակցության և լոբբինգի, ինչպես նաև միջազգային պարտավորությունների կատարումը մոնիտորինգի ենթարկելու միջոցով, բողոքի մեխանիզմների կիրառումը, ՀՀ կառավարության գործունեության հրապարակայնության ավելացմանն ու շահագրգիռ կողմերի շրջանում հակակոռուպցիոն միջոցառումների իրականացմանը նպաստելը:

**Արդյունքներ՝**

- 2009-2012թթ. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի I-ից III գլուխների վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների ներկայացում փորձագիտական խմբի քննարկմանը

- Փորձագիտական հանդիպումներ և խորհրդատվություն հիմնական շահագրգիռ կողմերի հետ՝ ոլորտի կարևորագույն հիմնախնդիրների լուծման նպատակով






## Advocacy for Effective Anti-Corruption Policy

| | |
|---|---|
| **Implementation period:** | 01.09.2007 - 31.08.2009 |
| **Budget:** | AMD 29,999,900 |
| **Donors:** | USAID Civic Advocacy Support Program, Counterpart International - Armenia |

**Description:** The goals of the project are to ensure adoption of the new anti-corruption strategy and action plan document and to obtain more effective anti-corruption policy enforcement. A variety of methods, including advocacy efforts to improve the quality of the anti-corruption policy documents, communication and lobbying, monitoring of compliance with international obligations, utilization of legal complaint mechanisms, increasing publicity of the Armenian government performance and promoting enforcement of anti-corruption measures among key stakeholders, are used to achieve these objectives.

**Outputs:**

- Remarks and suggestions on the first three chapters of the draft national anti-corruption strategy and its implementation action plan of Armenia for 2009-12 submitted for the consideration of the expert group
- Expert meetings and consultations with the key stakeholders to address the major problems in the field
- Reports on monitoring of implementation of Armenia's international obligations in fighting corruption
- Televised debates, presentations on governance and corruption matters, advocacy campaigns to make a public pressure on decision makers to adopt revised (new) anti-corruption policy,  incorporating

- Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Հայաստանի միջազգային պարտավորությունների կատարման մոնիտորինգի վերաբերյալ զեկույց

- Հեռուստաբանավեճեր, կառավարմանն ու կոռուպցիային առնչվող ելույթներ, շահերի պաշտպանության քարոզարշավներ որոշում կայացնողների վրա հանրային ճնշում գործելու նպատակով՝ ընդունելու վերանայված (նոր) հակակոռուպցիոն ռազմավարություն՝ բացահայտման, հանրային աջակցության և կանխարգելման հակակոռուպցիոն միջոցառումների գործադրմամբ

- Կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված՝ 3000 տպաքանակով 2009թ. օրացույցների նախագծում, տպագրում և բաժանում պետական մարմիններին, կուսակցություններին, միջազգային կազմակերպություններին, ՀԿ-ներին և լրատվամիջոցներին կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվա՝ դեկտեմբերի 9-ի կապակցությամբ:

detection, public support as well as preventive anti-corruption measures

- Design, printing, and distribution of 3,000 copies of "2009 anti-corruption calendars" to state institutions, political parties, international organizations, NGOs, media on December 9, International Anti-Corruption Day.

## 2007-2009թթ. ինստիտուցիոնալ աջակցություն

**Իրականացման ժամկետ՝** 01.09.2007 - 31.08.2009

**Բյուջե՝** 43,667,394.00 ՀՀ դրամ

**Դոնոր կազմակերպություն՝** Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ

**Նկարագրություն՝** Ծրագրի նպատակն է օժանդակել կազմակերպության ընթացիկ գործունեությանը՝ հանդես գալով որպես ազգային արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության ընդունման և իրականացման, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում (ԵՀՔ-ի, ԳՐԵԿՕ-ի, ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի և այլնի շրջանակներում) Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման հիմնական վերահսկող: Այն աջակցում է մոնիտորինգ իրականացնելու կազմակերպության ջանքերին՝ շահերի պաշտպանությունն ու իրազեկության բարձրացումը նպատակաուղղելով հակակոռուպցիոն քաղաքականության բարելավմանը և սատարելով առավել արդյունավետ կիրառմանը:

**Արդյունքներ՝**

- Փորձագիտական առաջարկություններ 2009-2012թթ. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի նախագծի վերաբերյալ

- Հայաստանի վերաբերյալ ԳՐԵԿՕ-ի գնահատման առաջին և երկրորդ փուլերի համատեղ զեկույցին առնչվող մեկնաբանություններ

- ԹԻ քարտուղարության ներկայացրած՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ փորձագիտական տվյալների ամփոփում






## Institutional Support 2007/2009

**Implementation period:** 01.09.2007 - 31.08.2009

**Budget:** AMD 43,667,394.00

**Donor:** Open Society Institute Assistance Foundation

**Description:** The project aims to assist in the ongoing activities of the organization in its role as a major watchdog promoting the adoption and implementation of an effective national anti-corruption policy and helping to ensure Armenia's compliance with its international obligations in the field of anti-corruption (ENP, GRECO, UNCAC, etc.). It supports the monitoring efforts of the organization to direct the advocacy and awareness-raising programs targeted at improving the corruption situation in Armenia and also aids it in implementation of more effective anti-corruption policy.

**Outputs:**

- Expert recommendations in drafting revised anti-corruption strategy and its implementation action plan for 2009-2012
- Comments on the Joint First and Second Round Evaluation Compliance Report on Armenia, adopted by GRECO
- Supplementing of UNCAC expert checklist-questionnaire, provided by TI Secretariat
- Shadow reports on the progress of the implementation of Armenian ENP Action Plan obligations for 2007 in the field of anti-corruption and environment protection
- TIAC contribution as author on Armenia Report in TI's "Global Corruption Report 2008. Corruption in the Water Sector"

- ԵՅՔ ԳԾ-ի Հայաստանի կողմից 2007թ. ստանձնած՝ կոռուպցիային և շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող պարտավորությունների իրականացման վերաբերյալ այլընտրանքային զեկույցներ

- ԹԻՀԿ-ի ներդրումը ԹԻ-ի լույս ընծայած՝ «Կոռուպցիան ջրային ոլորտում. Կոռուպցիայի վերաբերյալ 2008թ համաշխարհային զեկույց»-ի պատրաստմանը որպես Հայաստանի վերաբերյալ զեկույցի հեղինակ

- Շահերի պաշտպանությանը միտված՝ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հանդիպումներ Բրյուսելում, Ստրասբուրգում, Վաշինգտոնում և Նյու Յորքում Հայաստանի կողմից ստանձնած՝ միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ

- Հանդես գալով որպես ԹԻ-ի պաշտոնական պատվիրակության մաս և Քաղաքացիական հասարակության՝ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի սատարողների դաշինքի անդամ՝ մասնակցություն Բալիում (Ինդոնեզիա) կայացած՝ ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի մասնակից պետությունների երկրորդ կոնֆերանսին

- Խորհրդատվություն և հանդիպումներ մի շարք երկրների կառավարությունների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելու կազմակերպության տեսակետը Հայաստանում տիրող իրավիճակի, մասնավորապես, կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ

- Ավելի քան 30 հեռուստառադիոելույթներ

- Կոռուպցիայի դեմ պայքարի զանազան ասպեկտներին նվիրված ավելի քան 60 հիշատակումներ և հարցազրույցներ տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներում

- Մամուլի ասուլիս՝ հրապարակելու ԹԻ Կոռուպցիայի ընկալման 2008թ. համաթվի արդյունքները, և ԹԻ 2008թ. Կաշառք տվողների համաթվի (ԿՏՀ) տվյալների տարածում

- ԹԻՀԿ վեբ կայքի վերաձևավորում

- Գիտելիքների և հմտությունների զարգացում ավելի քան 16 դասընթացների ծրագրերին մասնակցության միջոցով:

- Advocacy meetings on the implementation of Armenia's international anti-corruption obligations in Brussels, Strasbourg, Washington, D. C. and New York

- Participation as a member of the Coalition of Civil Society Friends of the UNCAC as part of TI official delegation during the Second Conference of the States Parties to the UNCAC in Bali, Indonesia

- Consultations and meetings with representatives of foreign governments and international organizations to present the organization's views on the situation in Armenia, particularly, in the field of anti-corruption

- Appearance in over 30 TV and radio shows and programs

- Over 60 references and interviews on various aspects of fight against corruption in printed and electronic media

- Press conference to present TI's Corruption Perception Index 2008 data and dissemination of TI's 2008 Bribe Payers Index

- Redesign of TIAC website

- Advancing knowledge and skills through participation in over 16 training programs.

# Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի ուսումնասիրություն

**Իրականացման ժամկետ՝** 08.12.2008 - 15.01.2009

**Բյուջե՝** 2,200,000 ՀՀ դրամ

**Դոնոր կազմակերպություն՝** Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակ

**Նկարագրություն՝** Սույն ուսումնասիրությունը դիտարկում է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման հետ կապված որոշումների կայացման շղթան, մասնավորապես համապատասխան իշխանությունների գործունեությունը, ընթացակարգերի համապատասխանությունը օրենսդրությանը, շահագրգիռ կողմերի մասնակցությունն ու գործընթացների թափանցիկությունը: Որոշումների կայացման գործընթացների ծրագրի ուսումնասիրությունը նպատակ ունի նպաստելու Համաշխարհային բանկի կողմից իրականացվող՝ Հայաստանի շրջակա միջավայրի վերլուծության աշխատանքներին:

**Արդյունքներ՝**

Զեկույցի նախապատրաստում, որ ծրագրված է լույս է ընծայել 2009-ին:






## Case Study on Teghut Mining

**Implementation period:** 08.12.2008 - 15.01.2009

**Budget:** AMD 2,200,000

**Donor:** The World Bank Office in Yerevan

**Description:** This study focuses on the chain of decision-making related to the Teghut copper-molybdenum mine. In particular, it looks at the functions of respective authorities, procedural compliance with legislation, the participation of stakeholders, and the transparency of these procedural processes. The case study about the decision-making process is designed to contribute to the analytical work underlying the upcoming Country Environmental Analysis for Armenia conducted by the World Bank.

**Outputs:**

Development of a report scheduled for release in 2009.

# Շահերի պաշտպանության և աջակցության հակակոռուպցիոն կենտրոններ Երևանում, Գյումրիում և Վանաձորում

**Իրականացման ժամկետ՝** 08.10.2008 - 15.05.2010

**Բյուջե՝** 111,387,266 ՀՀ դրամ

**Դոնոր կազմակերպություն՝** ԱՄՆ ՄԶԳ հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր՝ իրականացվող Կասալս ենդ Ասոշիեյթս Ինք. ընկերության Հայաստանի մասնաճյուղի կողմից

**Նկարագրություն՝** Ծրագրով նախագծված է Շահերի պաշտպանության և աջակցության երեք հակակոռուպցիոն կենտրոնների հիմնադրում ու գործունեություն՝ քաղաքացիների կամ կազմակերպությունների բողոքները բավարարելու և համակարգային բարեփոխումները խթանելու նպատակով նրանց կարողության աճին ուղղված մեխանիզմ ապահովելու քաղաքացիական հասարակության և պետական մարմինների համար: Նրա նպատակն է խորհրդատվություն ապահովել քաղաքացիներին և աջակցել նրանց բողոքների ձևակերպման և դրանք իշխանության համապատասխան մարմիններին ուղղելու գործում, վերլուծել բողոքները, գտնել այն սողանցքերը, որոնք նպաստում են կոռուպցիայի աճին, հանդես գալ առաջարկություններով ու կազմակերպել ինստիտուցիոնալ բարեփոխումներին ուղղված քարոզարշավներ, ինչպես նաև բարձրացնել կոռուպցիային առնչվող խնդիրների և քաղաքացիների իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկությունը:

**Արդյունքներ՝**

- Շահերի պաշտպանության և աջակցության հակակոռուպցիոն կենտրոնների բացում Լոռու և Շիրակի մարզերում, որոնք գործարկվում են տեղական գործընկերների՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի և Գյումրիի ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի համագործակցությամբ

- Երևանի ՇՊԱԿ-ի բացման նախապատրաստություն:





# Establishment and Operation of Anti-corruption Advocacy and Assistance Centers in Yerevan, Gyumri and Vanadzor

| | |
|---|---|
| **Implementation period:** | 08.10.2008 - 15.05.2010 |
| **Budget:** | AMD 111,387,266 |
| **Donor:** | USAID Mobilizing Action Against Corruption Activity, implemented by Armenia Branch Casals & Associates, Inc. |

**Description:** The project is designed to establish and operate three Anti-corruption Advocacy and Assistance Centers (AACs) to provide a mechanism for civil society and state institutions to enhance the capacity of citizens or organizations to redress their grievances and stimulate system-level reforms. Its goal is to advise and assist citizens in the formulation and direction of complaints to respective authorities, to analyze complaints, and to identify loopholes that promote the proliferation of corrupt practices. The work of the centers also aids in the development of policy proposals and the organization of campaigns for institutional reforms. They also serve to raise public awareness on matters of corruption and citizens' rights.

**Outputs:**

- Opening of two AACs in Vanadzor, Lori Marz and Gyumri, Shirak Marz operated by local partner organizations – Helsinki Citizens' Assembly Vanadzor Office and Gyumri "Asparez" Journalists Club

- Preparation for establishment of Yerevan AAC.

# Շրջակա միջավայրի վերաբերյալ իրազեկության բարձրացմանը և շահերի պաշտպանությանը նվիրված քարոզարշավներ

- Գործընկեր կազմակերպությունների և ակտիվիստների հետ բողոքի ցույցերի կազմակերպում, «անաղմուկ նկարչության» ակցիա, երթեր, մամուլի ասուլիսներ և ելույթներ ԶԼՄ-ներով, պետական պաշտոնյաներին և հաստատություններին ուղղված դիմումներ և նամակներ՝ Թեղուտի անտառի ծառահատման և պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման, Սևանա լճի հիմնախնդիրների և Երևանում ծավալվող անօրինական շինարարության կապակցությամբ

- Թեղուտի գործով դատարան դիմելու նախապատրաստություն

- Բնապահպանական հիմնահարցերի շուրջ խորհրդակցական հանդիպումներ ՀՀ վարչապետի և պետական կառույցների ներկայացուցիչների հետ

- Հայաստանի և արտերկրի լրատվամիջոցներով բնապահպանական հարցերի լուսաբանում:





## Environmental awareness raising and advocacy campaigns

- Together with partner organizations and activists, conducting of protest actions, silent painting protest, marches, press-conferences and other media appearances, appeals and letters addressed to the state officials and institutions on problems related to logging of Teghut Forest and operation of copper-molybdenum mine, Lake Sevan, Yerevan illegal construction, etc.

- Preparation to a lawsuit on Teghut case

- Consultative meetings with the Prime Minister and state agencies on environmental issues

- Reflection of ecological problems by local and foreign media.

# Քաղաքացիական հասարակության կառույցների մոբիլիզացում՝ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով

- Գործընկեր ՀԿ-ների համագործակցությամբ ավելի քան 15 հայտարարությունների հրապարակում, որ առնչվում են 2008թ. ՀՀ նախագահի ընտրության նախընտրական շրջանին, քարոզարշավին և հետընտրական զարգացումներին, հասարակական ակտիվիստների և իրավապաշտպանների հանդեպ հարձակումներին, լրագրողների նկատմամբ բռնությանը և այլն

- Մի շարք միջոցառումների կազմակերպում և մասնակցություն նախընտրական և հետընտրական շրջանում՝ քննարկելու Հայաստանում քաղաքացիական հասարակության առջև ծառացած խնդիրները

- Հավաքների ազատության մոնիտորինգ Հայաստանում գործընկեր ՀԿ-ների հետ համատեղ:





## Mobilizing civil society to protect citizens' rights and freedoms

- In cooperation with partner NGOs, releasing of 15 statements on pre-election period, the campaign and post-election developments related to 2008 presidential elections, assaults on public activists and human rights defenders, violence and repressions against journalists, etc.

- Organization and participation in a number of events in pre- and post-election periods to discuss the challenges civil society faced in Armenia

- Monitoring freedom of assemblies in Armenia, in collaboration with partner NGOs.

# ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐ / ՍԵՄԻՆԱՐՆԵՐ
# CONFERENCES / WORKSHOPS



**ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի մասնակից պետությունների երկրորդ կոնֆերանս**

Թրանսփարենսի Ինթերնեշնլ
Բալի, Ինդոնեզիա
Հունվար 2008

**Սեմինար «Թափանցիկության ապահովումն ու կոռուպցիայի կրճատումը զինված ուժերում»**

Անվտանգության քաղաքականության Ժնևյան կենտրոն, Թրանսփարենսի Ինթերնեշնլ Մեծ Բրիտանիա, Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևյան կենտրոն, ՆԱՏՕ-ի և Շվեյցարիայի կառավարություն
Ժնև, Շվեյցարիա
Մայիս 2008

**Քննարկում «Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործառույթի վերաբերյալ ԵԽԽՎ թիվ 1609 (2008) բանաձևի կատարումը»**

Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի հայաստանյան կոմիտե, «Հույս» ՀԿ, «Միջնաբերդ» ՀԿ
Երևան, Հայաստան
Հունիս 2008

**Քննարկում «ԵԽԽՎ 1609 (2008) բանաձևը. Քաղաքացիական հասարակության մոտեցումները»**

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ - Հայաստան
Երևան, Հայաստան
Հունիս 2008

**Սեմինար-քննարկում՝ «Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի մոնիտորինգ»**

Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն ՀԿ
Երևան, Հայաստան
Հուլիս 2008





**Second Conference of the States Parties to the UN Convention against Corruption**

Transparency International
Bali, Indonesia
January 2008

**Workshop "Building Transparency and Reducing Corruption Related to Defense Establishments"**

Geneva Centre for Security Policy together with Transparency International-UK and the Centre for the Democratic Control of the Armed Forces with the support of NATO and the Swiss Government
Geneva, Switzerland
May 2008

**Discussion "The Implementation of PACE Resolution 1609 (2008) on Functioning of Democratic Institutions in Armenia"**

Transparency International Anti-corruption Center, Helsinki Citizens' Assembly Vanadzor Office, Helsinki Citizens' Assembly Armenian Committee, "Huys" NGO, "Mijnaberd" NGO
Yerevan, Armenia
June 2008

**Discussion "PACE Resolution 1609 (2008): Civil Society Approach"**

Open Society Institute Assistance Foundation - Armenia
Yerevan, Armenia
June 2008

**Seminar "Monitoring of European Neighborhood Policy Action Plan Implementation"**

Analytical Center for Globalization and Regional Cooperation NGO
Yerevan, Armenia
July 2008

**Քննարկում «Տեղեկատվության ազատության մասին օրենքը որպես հակակոռուպցիոն գործիք»**

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
Վանաձոր, Իջևան, Հայաստան
Օգոստոս 2008

**Խորհրդակցություն «Կառավարում և հակակոռուպցիոն ռազմավարություն»**

Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակ
Երևան, Հայաստան
Սեպտեմբեր 2008

**Համաժողով «Գնահատման միջոցով արդյունավետ կատարողականի ապահովում»**

Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ
Երևան, Հայաստան
Սեպտեմբեր 2008

**Երկրի արդի կարևորագույն հիմնահարցերի վերաբերյալ քննարկում**

«Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնություն
Երևան, Հայաստան
Հոկտեմբեր 2008

**ԹԻ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային, միջտարածաշրջանային և ԹԻ անդամների ամենամյա համաժողովներ**

Թրանսփարենսի Ինթերնեշնլ
Աթենք, Հունաստան
Հոկտեմբեր 2008

**13-րդ միջազգային հակակոռուպցիոն կոնֆերանս «Գլոբալ թափանցիկություն. պայքար կոռուպցիայի դեմ հանուն կայուն ապագայի»**

Թրանսփարենսի Ինթերնեշնլ
Աթենք, Հունաստան
Հոկտեմբեր 2008

**Seminar-training "Freedom of Information Law as an Anti-corruption Instrument"**
"Asparez" Journalists' Club
Vanadzor, Ijevan, Armenia
August 2008

**Consultation meeting "Governance and Anti-corruption"**
The World Bank Armenia Country Office
Yerevan, Armenia
September 2008

**Conference "Ensuring Effective Performance through Evaluation"**
Civic Development and Partnership Foundation
Yerevan, Armenia
September 2008

**Discussion "Key Issues Facing Armenia Today"**
"Partnership for Open Society" Initiative
Yerevan, Armenia
October 2008

**TI Europe and Central Asia Regional, Cross-regional Meetings and Annual Membership Meeting**
Transparency International
Athens, Greece
October 2008

**13th International Anti-corruption Conference "Global Transparency: Fighting corruption for a sustainable future"**
Transparency International
Athens, Greece
October 2008

**Հանրային շահերի պաշտպանությանը նվիրված եվրոպական ֆորում**
Հանրային շահերի իրավունքի ինստիտուտ
Բուդապեշտ, Հունգարիա
Նոյեմբեր 2008

**Ժողովրդավարական օրինաստեղծ գործընթացի թեմայով մարդկային չափման վերաբերյալ լրացուցիչ խորհրդակցություն**
ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ, ԵԱՀԿ նախագահող երկիր Ֆինլանդիա
Վիեննա, Ավստրիա
Նոյեմբեր 2008

**Սեմինար «Օրհուսի կոնվենցիայի իրականացումը Հայաստանում. շրջակա միջավայրի կառավարումը և լայն հասարակության դերը»**
Ֆրիտյոֆ Նանսենի ինստիտուտ, ՀՀ բնապահպանության նախարարություն
Երևան, Հայաստան
Նոյեմբեր 2008

**Կլոր սեղան «Դեպի արևելաեվրոպական գործընկերությո՞ւն. Հարավային Կովկասի քաղաքացիական հասարակության քննադատական տեսակետը ԵՀՔ բարեփոխման վերաբերյալ»**
Բաց հասարակության ինստիտուտ
Բրյուսել, Բելգիա
Նոյեմբեր 2008

**Համաժողով «Պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների դերը կոռուպցիայի դեմ պայքարում»**
Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
Երևան, Հայաստան
Դեկտեմբեր 2008

**Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի 2008թ. իրականացման՝ քաղաքացիական հասարակության զեկույցի ներկայացում**
Գործընկերություն հանուն բաց հասարակության նախաձեռնություն
Երևան, Հայաստան
Դեկտեմբեր 2008

**European Pro Bono Forum**
Public Interest Law Institute
Budapest, Hungary
November 2008

**Supplementary Human Dimension Meeting on Democratic Lawmaking**
OSCE's Office for Democratic Institutions and Human Rights and the Finnish OSCE Chairmanship
Vienna, Austria
November 2008

**Seminar "Implementation of the Aarhus Convention in Armenia: Environmental Management and the Role of Public"**
The Fridtjof Nansen Institute, The Ministry of Nature Protection of Armenia
Yerevan, Armenia
November 2008

**Roundtable Duiscussion "Towards Eastern European Partnership? A Critical View from South Caucasus Civil Society on the ENP Reform"**
Open Society Institute
Brussels, Belgium
November 2008

**Conference "The Role of Government, Non-Governmental Organizations and Media in the Fight against Corruption"**
Eurasia Partnership Foundation in Armenia
Yerevan, Armenia
December 2008

**Presentation of "Armenia's ENP Implementation in 2008: Partnership for Open Society Perspective" Assessment Report**
The "Partnership for Open Society" Initiative
Yerevan, Armenia
December 2008

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ / ԴՈՆՈՐՆԵՐ
# FINANCES / DONORS



## 2008թ. եկամուտներն ըստ դոնորների (ՀՀ դրամով)*
## 2008 Revenues by Donors (in AMD)




| | |
|---|---|
| ԱՄՆ ՄԶԳ Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագիր, Քաունթերփարթ Ինթերնեշնլ-Հայաստան | USAID Civic Advocacy Support Program, Counterpart International - Armenia |
| Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստան | Open Society Institute Assistance Foundation-Armenia |
| Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, Բուդապեշտ | Open Society Institute Assistance Foundation, Budapest |
| Բրիտանական դեսպանություն Երևանում | British Embassy Yerevan |
| Ընտրական Համակարգերի Միջազգային Հիմնադրամ/Այ Էֆ Ի Էս, Վաշինգտոն, ԱՄՆ | International Foundation for Electoral Systems/IFES, Washington, USA |
| ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիր, «Կասալս ենդ Ասոշիեյթս» Ինք. | USAID Mobilizing Action Against Corruption Program, Casals & Associates Inc. |
| Այլ եկամուտներ և շնորհներ շնորհատու կազմակերպություններից | Other Incomes and Grants from Other Donor Organizations |

* *1 ԱՄՆ դոլարը = 306.73 ՀՀ դրամ* *1 USD = 306.73 AMD*
*1 եվրոն = 435.00 ՀՀ դրամ* *1 EUR = 435.00 AMD*



## 2008թ. իրականացված ծրագրերի ծախսերը (ՀՀ դրամով)




- Արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության խթանումը Հայաստանում
- 2007թ. խորհրդարանի ընտրական քարոզարշավի, «Հազարամյակի մարտահրավեր»-ի կանոնակարգերի թափանցիկությունը *
- 2007-2008թ.թ. ինստիտուցիոնալ աջակցություն
- Նախագահական ընտրությունների քարոզարշավի ֆինանսավորման, գնումների մոնիտորինգ Հայաստան-2008թ.
- 2008-2009թ.թ. ինստիտուցիոնալ աջակցություն
- «Իմ հարցը ապագա նախագահին»
- Նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման մոնիտորինգ Հայաստանում
- Շահերի պաշտպանության և աջակցության հակակոռուպցիոն կենտրոններ Երևանում, Գյումրիում և Վանաձորում
- Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագրի ուսումնասիրություն
- Երկարաժամկետ ակտիվներին վերաբերող շնորհներից ծախս

* *Ծրագրի իրականացումն ավարտվել է 2007թ. դեկտեմբերին, սակայն որոշ վճարումներ կատարվել են 2008թ. հունվարին:*

## 2008 Expenditures by Implemented Programs (in AMD)




- Advocacy for Effective Anti-Corruption Policy in Armenia
- 2007 Parliamentary Election Finance & MCA-Armenia Procurement Regulations Transparency *
- Institutional Support 2007/2008
- Monitoring of Presidential Elections Campaign Finance and Public Procurement in Armenia in 2008
- Institutional Support 2008/2009
- "My Question to Future President"
- Campaign Finance Monitoring in Armenia
- Establishment and Operation of Anti-corruption Advocacy and Assistance Centers in Yerevan, Gyumri and Vanadzor
- Case Study on Teghut Mining
- Expenses from grants for long term assets

* *The project implementation ended in December 2007, while some payments were made in January 2008.*